

Ապօրս Պուշտ

2010





1978

891.91 Graphite 604-43
Q-831 Fullerenes

17-803 8/1x81



5р


Խորհրդային Գրողների Համամիութենական Առաջին Համագումարին:

Հ Ս Խ Հ Պ Ե Մ Ի Բ Ա Մ

Պ ե ր վ օ լ յ ս Վ ս ե ս օ յ զ ն ո յ
Ը է զ դ Ս ո վ ե տ ո ւ հ ա մ

Պ ա շ ա մ ա ր ա յ ս ա մ ա ր ա յ ս





գ. 2.
974

ԳԱՅԵՐՈՒ
ԳՈՐԾՎ

ՄԱՍՏԵՂՈՅՑՈՒԼԵՐ

ԼԵԿՑԻՈՆ

ԽՈՀԱՆ. ՅԵ. ՂԱՐԵՄ

ՊԵՏՐՈՎ
ՅԵՐԵՎԱՆ - ԽՄԿԽԿԽ

Սուպիր շապիկը, կազմը, Փորձացը, ամվանաքերքերը
յեղ նկարները՝ նկարիչ Հակոբ Կոչոյանի
Տեխնիկական խմբագիր՝ Տ. Խաչվանելյան
Սրբագրիչներ՝ Սոս Հակոբյան, Վ. Մանուկյան

Լ. ԿԱՄԵՆԵՊ.

ՄԵՇ ՍԵՐՆԻԴԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Պետհրատի տպարան
Գլավ կի տ 8492 (р)
Հրատարակութ. 2924
Պատկեր 533
Տիրած 10.000



774 - 2010

ՄԵՇ ՍԵՐՆ ԴԻ
ՅԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ*)

Մեծ պրոլետարական պոետի դրական գործունեյության քառասնամյակի տոնական որին լավ և վերհիշել յերիտասարդությունն այն սերնդի, վորի մեջ նա մեծացել և, ապել ու պայքարել:

Դա մեծ սերունդ եր. նա կատարեց անմուանալի գործեր: Այդ նըա մասին և ասել հին պոետը.

Счастлив, кто посетил сей мир
В его минуты роковые,
Его призывали всеblагие
Как сотрапезника на пир. **)

Նրան վիճակվեց պատմական մեծ ճակատամարտերի բախտը, և, վոր ավելի ևս կարեոր եւ, հաղթանակների, վորոնք սահման են դնում համաշխարհային-պատ-

*) Այս առաջաբանը գրված է Ա. Մ. Գորկու դրական գործունեյության քառասնամյակի առթիվ: Թ. Թ.

**) Տյուտչեկի հոչակալվոր բանասահղության սկիզբն եւ Տալիս ենք արձակ թարգմանությունը. «Յերջանիկ և նա, ով այցելել եւ աշխարհը նրա ճակատամարտի ըոպեներին, նրան աստվածները կոչել են խնճույքի, իբրև սեղանակի», Թ. Թ.

մական դարաշրջանների միջև չանձինս նրան աշխարհն անցավ նոր Ռուբիկոնը: Իր գոլծերի վեհությամբ, եր կամքի թափով, իր յեռանդի անհողողողությամբ նա ցնցեց աշխարհը և հոյակապ ապագայի հիմքը գրեց: Ասիական հետամմացության, ստրկական ճշշգածության և անարխիստական ցրվածության պայմաններում նա տարիներով զորակոչի յենթարկեց մարդկային բանականությունը և կամքը հավաքեց իր յերկարացալիունները, պարտություններ կրեց, կրկն բարձրացավ և, վերջապես, փերջին և գնուական մարտի մղեց

Ցերկարի յեվ իրի բալում
Վաղուց փորձված բանակները:

Գորկու յերիտասարդությունն համընկավ այս սերբնդի յերիտասարդությանը: Նա դարձավ նրա յերդւում Մենք ինկատի ունենք, ինարկե, այդ սերնդի ինկական-հեղափոխական հատվածը, նրա այն մասը, վորը — ինչպես և ինքը՝ Գորկին — անմիջականորեն դուրս ե յեկել պղոլետարական ներքնախավերից, կամ ընդմիշտ (իր կանքով ու պայքարով) կատել ե իր բախտը բանվոր դասակարդի բախտի հետ:

Նոր սերնդի այդ իսկական-հեղափոխական խրմբակը, վոր պատմական ասպարեզ եր դուրս յեկել 90-ական թվականների հենց սկզբին, կարող եր հենցվել մեծ թերթիայի վրա, բայց այն անհրաժեշտ եր խիե: Գոենկացնողների ձեռքից, հարմարվողների, վերաբնել իբրև մասսայական քաղաքացիական կովկառծիքործողների, բարձրացնել աշխարհի վրա՝ իբրև նոր պատմական եպօխայի գրոշ:

Յյդ թեորիան կարող եր հենվել աճող, դեպի կոկվ ձգտող, հերոսական դասակարգի վրա, բայց նրան հարկավոր եր արթնացներ, միաձուլել, զրահավորել թեորիայով և կազմակերպությամբ:

Յեկ վերջապես նա անցյալում ուներ Զերնիկևսկի-ների, Խալտուրինների և Ժելաբովների հեղափոխական հոյակապ արագիցիան, բայց այն հարկավոր եր մաքրել նրան հեղեղող մոլախոտերից, վոր աճել եյին խոլ ժամանակներում, լցնել սոցիալական նոր բովանդակությամբ և տալ նոր դասակարգի:

Մեծ գործերը պայմանջում են մեծ միտք, բայց և մեծ վոգնորություն, հետևապես՝ մեծ պոեզիա: Այդ տպեց իր դասակարգին Գորկին: — Նա յերիտասարդ եր հեղափոխության հետ միասին, և նեղափոխությունը յերիտասարդ եր յերիտասարդ Գորկու հետ նրա պոեզիան պատմական գործ եր. նա զրահավորում եր միտքը, զգացմունքը և կամքը պատմական ասպարեզ յելնող մարդկության պայքարող ջոկատի:

Ցեվ սրի՞ր քո սիրտը արփությամբ, —
— ասում եր հին հունական պոեմի քերթողն իր յերդած հերոսի մասին: Գորկու ստեղծագործությունը «սրում» եր արխությամբ և կամքով պղոլետարական գործի բազմաթիվ ուազմիկների սրտերը:

Նրա լեռնդներում և յերգերում, նրա խոհերում, յերազներում և անհեծքներում, նրա անսպասելի հերսոսների խոսքերում, ոսւսական կյանքի տեսարանների ուրվագծերում նոր դասակարգը կարգում եր իր սեփական ձգտությունների և դիտողությունների գեղարվեստական մարմնավորումը և ընդհանրացումը

Նրանց մեջ կար բազում տաելություն և արհաւմարդում մարանք, բայց այդ սերունդն ինքը ևս արհաւմարդում և ատում եր անհուն ու խորը: Նրանք համակված եյին նոր մարդու և նոր աշխարհի ցնորքով, հավատքով դեպի թարմացնող փոթորկի անհարժեշտությունն ու անխուսափիլությունը, բայց նոր սերունդը ևս կրքու յերազում և անհողողող կերպով հավատում եր հին աշխարհի գգալիք արհավիրքին: Այդ յերգերը դաժան եյին, նրանց մեջ չկար փոչ մի կաթիլ սանտիմենտալիզմ: Նրանք փառաբանում եյին կովկությունը կրքերը, նվիրվածությունը մինչեւ մահ, մարդկանց, զոր քանդում են սովորույթները և հասուցուան այդ լրենց սեփական արյունով, ազատազրվող անհատի պաթուսը, անկոր կամքը և փոթորկությունը: Պոետ Պոետը՝

Կոչում եր կործանել դարավոր հիմնրը,
Ստեղծել գալիք սերմերի համար ազատ ատպարեզ...

Վողորմելի 80-ական թվականների փողորմելի ժամանակները — սանտիմենտալ նարոդնիկները, ստոր լիբրեալները, բոլթ ծնված կուլտուրնիկները — դողում եյին զայրություն: Իսկ յերիտասարդ սերունդն ընդունում եր այդ յերգերը, իբրև ծնունդ ու ե փակ ան պոետի նա ևս սանտիմենտալ չեր, նրան վիճակված եյին դաժան ճակատամարտեր, նրա մեջ ևս սերը վերածվում եր ատելության և հուրիուրատում եր գործունեյությամբ: Նա իբրև «հրամայական իմպերատիվ» եր ընդունել իր համար իր ուսուցչի խոսքերը՝ «փլլիսոփաները միայն տարբեր ձեռով են

բաց ատը ել աշխարհը, բայց խնդիրն այն ե, վորուսուղի վեր ափու լի են ք այնա»

Վերջապես նա ևս, ինչպես և պոետը, խնդուն և լավատես եր, — նա պլովետարիատի մեջ գտավ այն ուժը, վորն ընդունակ եր կատարելու այդ պատգամը: Յեկ հենց այդ պատմառով պատմական հորձանուտաները հաջորդականության մեջ նա տարբերվեց նրանցից, ում խարազանում եր պոետը.

Իսկ դուք աշխարհում կապրեք,
Վորդիրի նման կույր ու սին,
Զեր մասին վոչ հեքյաք կըպատմեն,
Վոչ յերգիր կերգին ձեր մասին:

Գորկու ժամանակակիցներից և բարեկամներից լավերի մասին այժմ արդեն պատմում են հեղաթներ և յերգում են՝ յերգեր:

Այդ պոետը և նրա սերունդը փոչ մի առիթ չունեն մեղադրելու իրենց յերիտասարդությունը: Նրանում, այդ յերիտասարդության մեջ, և այն, զոր գոռենիկ փորձը — հիմարների ինելքը կարող ե դատապարտել, այսինքն՝ ոռմանտիզմը, նվիրվածությունը ցնորքին, չափազանցված անհատապաշտությունը — այս ամենն անհրաժեշտ եր, փորպեսը նա հասունանար մեծ գործերի համար:

Յերեկից պատմաբաններն ու ուսումնակրողները կպատմեն, թե ինչու իր զգացմունքներն ու մտքերը մարմացնելու համար նոր սերնդի յերգելը պետք ե դիմեր լեգենդներին և հեքյաթներին, յերկնային սահմանների ազատ թափառաշրջկիկների, ոռմանտիկ գըն-

Հուների և առփաստանային էռովի մսերի պատկերներին Մեզ համար այժմ բավական է նշել, վոր իր բանաստեղծություններով և լեգենդներով Գորկին սերտորեն ոգնեց ստեղծելու այն սերունդը, վորն իր ուսերի վրա կրկց համաշխարհային մեծագույն հեղաշջուռը, վոր նա վիթխարի չափով մասնակցություն ունեցավ այն բանին, գորպեսզի զրահավորի նրան յեռանդով ու կամքով, վոր պայթեցրին հին աշխարհը:

Մեր գրքույկը հավակնություն չունի համարվելու լրիվ կամ բազմակողմանի: Յերիտասարդ Գորկու մի քանի գրվածքների ընտրությամբ մենք կամենում ենք հիշեցնել մեր յերիտասարդությանը, թե ինչ եր Գորկին մեր սերնդի համար, ինչ յերգեր եր նա յերգում արշալույսին այն մեծ պատմական ճակաամարտի, վորը նա այժմ ջարունակում ե, և, ինարկե, կավարտի հաղթանակով:

Թըքույկում հավաքված բոլոր գրվածքները գրված են 1893 — 1895 թ.թ. ժամանակաշրջանում նրանցից մի քանիսը սակայն տպագրվել են շատ ավելի ուշ, որինակ «Կոմսունի Ելեն-դե-Կուրսիկ» մասին՝ բալլարդը ապվել ե 1916 թ., վերջին քայլակը լույս ե տեսել 1906 թ., «Արևի Վորդիք» պիեսում: 1911 թվին նապարի կդում Ալեքսեյ Մաքսիմովիչն՝ արտագրել ե այն կտալացի բանվոր Լուիջի Յապելլու համար: Լուիջի Յապելլու համար չեր միայն, վոր ուսակցիայի ժամանակաշրջանում անհրաժեշտ եր հիշեցումն այն մասին, վոր

Մենք — կրակներն ենք պայծառ գալիքի:

Սյուն հարկավոր ե այժմ, յերբ գալիքը դառնում ե ներկա: Ավելի ևս անհրաժեշտ եր այդ քառասուն տարի առաջ, յերբ այդ գալիքի համար գրվում ելին միմիայն առաջին քարերը: Այսպես քառասուն տարի անում եր պոետն իր հրաշալի, հոյակապ և մարգկության համար կարենոր գործը, անդադրում կերպով վառելով մեր առջեւ գալիքի կրակները:

Ռուսական պոետիայի հիմնագրի, նրա լեզվի անմոռանալի ստեղծագործողի մասին մի այլ պոետ հարցուր տարի առաջ ասել ե *):

Նրան, իբրեւ իր մերն առաջին,
Ռուսաստանի սիրտը չի մռանա...

Մենք վաղուց արդեն կ' մտքերով, կ' գրացմունք-ներով դուրս ենք յեկել Ռուսաստանի սահմաններից, դեսլ ավելի մի լայն աշխարհ, և այդ իսկ պատճառով ասենք հիմա այսպես: — Գորկուն ևս, իբրև առաջին սիրույն, յերբեք չի մոռանա սիրտը այն մարդկության, վորը ծնվում ե համաշխարհային պրոլետարական պայքարի տանջանքներում և հաղթանակներում:

*). Տյուաշեկը Պուշկինի մասին: Ծ. Թ.



Մաքսիմ Գորկի

—

Громыца



Зевс

Ծ

ովի ալեհեր հարթության վրա
Ամպեր ե ահա-կուտակում քամին,
Ահեղ ամպերի և ծովի միջն
ձախրում ե հպարտ մըըրկահավը՝
Թռչում ե՝ մի սկ կայծակի նման
Մերթ ալիքներին թեով գիպչելով,
Մերթ նետի նման ամպերին հասած՝
ձչում ե նա չոր — և խիսդ են լսում
Ամպերը խիզախ թռչունի ճիշում։
Հնչում ե ճիչում — փոթորկի ծարավ։
Յեկ զայրույթի ուժ, և՛ կրքի հրդեհ,
Յեկ հաղթանակի հավատք են լսում
Ամպերը նրա այդ ահեղ ճիչում։
Նվում են ճայերն ամպրոպից առաջ,
Սուզահավերը նվում են նույնապես, —
Սուզահավերին անհայտ ե հավետ
Անհուն հրճվանքը կյանքի պայքարի։
Գոռ վորոտներից սարսում են նրանք,
Հիմար պինդվինը թագցընում ե խեղն,
Գիբուկ մարմինը ժայռերի խորքում...
Յեկ միայն հպարտ Մըըրկահա՛վը




Ճախրում համարձակ, խիղախ և աղատ
 Մոլի ալմոր, ճերմակ վրփուրում:
 Ալելի մռայլ ու ծանը են իջնում
 Ամպերը ծովի հարթության վրա,
 Յել ալիքներն են յերգում ու պարում՝
 Թոչելով գեպի վորոտը պայթող:
 Յասման վրփուրում վորոտն ե թնդում,
 Ալիքներն են հորդ՝ վիճում քամու հետ,
 Յել ահա հանկարծ զրկում ե քամին
 Ամպերի յերամն անդուլ զրկանքով,
 Յել շպրտում ե ամենի թափով,
 Վայրի բարկությամբ, ժայռերի վրա,
 Փշում ե, ցրում, գարձնում փոշի
 Նրանց զմբուխտե կույտերն ահագին, —
 Մըրբկահավը ճախրում ե ճիչով,
 Կայծալի նման ամպերը ճեղքում —
 Պոկում ե թեով վրփուրը ջրի,
 Ճախրում ե ահա, ինչպես հզոր գե,
 Սև, անագորելին վոզի փոթորկի, —
 Յել ծիծաղում ե և խուլ հեկեկում...
 Վորոտի ցասման, վրդովմունքի մեջ
 Նա — զգայուն զիւ վաղուց ե արդեն
 Հոգնություն տեսնում: — Համոզված ե նա,
 Վոր չեն պարուրի ամպերն արկին,
 Չեն ծածկի ընդմիշտ, չեն ծածկի, ո, վհչ: —
 Վորում ե քամին... Վորոտը թնդում...
 Կապույտ բոցի պես ամպերն են վառվում
 Շովի ալեկոծ անդունդի վրա —
 Բռնում ե ծովի կայծակի նետերն




Ու իր ահռելի ընդեղքում մարուժ
կրակե կարմիր ոձերի նման
թեզ գալարվում են, և՛ կորչում ծովում
Այդ կայծակների ցոլքերը բռսորդ
— Փոթորիկն հիմա թինդով կըպայթի...
Դա խիզախ, հպարտ մրցրկահաջու ե
ձախրում սլացող կայծակների մեջ,
Ահեղ աղմըկող, հորդ ծովի վրա.
Դա — հաղթանակի յերգիչն ե ճշում.
— Թնդ փոթորիկը՝ ուժգնորեն պայթի...





ГИЛДЕЗ
ЗЕРФЕ



F արձը լեռների
Կատարը սողաց
Յել պառկեց այնտեղ,
Խոնավ քարափում,
Գալարուն իժը՝
Հայացքը ծովին:

Բարձը արևն եր
Յերկընքում շողում
Յել լեռներն եյին
Շոգ՝ ջնչում վերև,
Յել ալիքները
Զարնըվում եյին
Վարը՝ քարերին:

Իսկ ձորի միջով
Վարը, խավարում,
Սահանքն եր սահում
Դեպի ծովը լուրթ,
Զարկելով իրար
Քարերն հատակի,



Փրփուրով պատած,
Հղոր, ալեհեր,
Կտրում եր լեռը
Յեվ ծովը թափում
Դժգոհ վունցով:


Հանկարծ այն քարափն,
Ուր իժն եր պառկել,
Վերևից ընկալ
Վիրավոր քազեն՝
Փշըրփած կրծքով,
Փետուրն արյունոս:
Մի հատու ճիշով
Նա ընկալ գետին —
Յեվ զարնըվում եր
Անգոր զայրույթով
Ամրակուռ քարին...

Իժը վախեցավ,
Յետ սողաց ճեպով,
Հասկացավ սակայն,
Վոր կյանքին նրա
Մնացել ե լոկ
Մի-քանի վայրկյան...
Մոտ սողաց իսկույն
Մեռնող թոչունին
Յեվ ֆշաց ուղիղ
Աչքելին նրա.
«Ի՞նչ ե. մեռնում ես...»

«Այն, մեռնում եմ,—
Շշնջաց բազեն,
Խորը շնչելով.
— Յես լավ ապրեցի...
Յես բախտավոր եմ...
Քաջ կովեցի յես...
Տեսա յերկինքը...
Դու չես տեսնի այն
Ցերքեք այնքան մոտ...
«Ե՞ն, խեղճ արարած,
Ի՞նչ ե յերկինքը.
Դատարկ տեղ միայն...
Վհնց սողամ այնտեղ...
Այստեղ ինձ համար
Ավելի լավ ե.
Խննավ ու տաք եւ»
Այսպես իժն ասաց
Ազատ թչունին,
Ծիծաղեց հոգում
Նրա անհեթեթ
Մտքերի վրա,
Յեվ այսպես խորհեց.
«Թոիր թե սողա —
Վախճանն հայտնի յե...
Բոլորս ել վերջը
Կըպառկինք հողում,—
Ամեն ինչ վերջը
Աճյուն կդառնա:»

Բայց խիղախ բազեն
Թպրտաց հանկարծ,
Կանգնեց մի փոքր
Յեվ շուրջը նայեց —
Քարափին խնսավ.

Գորշ քարի միջով
Զուրն եր թորում դուրս,
Յեվ հեղձուցիչ եր
Քարափին խավար,
Յեվ գալիս եր զաղջ,
Ծանր, լեշի հոտ:
Յեվ ճշաց բազեն
Կարոտով, ցավով,
Հավաքած բոլոր
Իրա ուժերը.
— Ո, յեթե յերկինք
Մեկ ել թռչելի...
Յես կըսեղմեյի
Թշնամուն կրծքիս
Յեվ... թնդ հազենար
Արյունով իմ նա...
Ո՛, յերջանկություն
Կովի, պայքարի...
Իսկ իժը խորհեց.
«Յերեի այնտեղ
Ապրելը այդքան
Իրնք վոր լավ ե,
Յեթե նա այդպես



Խոր հառաջում ե...
Յեկ առաջարկեց
Ազատ թշունին. —
«Դու ել մտաեցիր
Յեղբին քարափի
Յեկ նետվիր ներքև —
Գուցե թևերըդ
Քեզ քարձագընեն,
Յեկ կապրես կրկին
Դու մի քիչ ես
Թո վես տարբերքում»

Յեկ հանսեց բազեն,
Յեկ, խենթ ճչալով,
Գնաց յեկերը՝
Ճանկերը խոնավ
Քարին քսելով,
Յեկ մոտեցա՛վ նա,
Պարզեց թևերը,
Շնչեց կրծքնկ վող,
Բոցեց աչքերը —
Յեկ գլուխեց լա՛ր,
Յեկ, ինչպես քարը,
Սահելով ներքեն,
Արագ ընկնում եր,
Կոտրում թևերը,
Յեկ կորցընում եր
Իր փետուրները...
Զրի ալիքը



Գրկեց մարմինը,
Յեվ լվանալով
Նրա արյունը,
Փրփուրով պատած
Մղեց գետ ծովը:
Իսկ ալիքները
Տխուր հառաջով
Զարնըլում եյին
Չոր քարերին ա'յն.
Յեվ չեր յերևում
Նրա մարմինը
Ծովի անսահման
Տարածության մեջ...
Քարափում պառկած
Խորհում եր յերկար
Իժը թռչունի
Վախճանի մասին
Յեվ սիրո մասին
Դեպի յերկինքը...
Յեվ ահա նայեց
Դեպի հեռնեն նա,
Վոր հար շոյում ե
Մեր հայացքները
Բախտի յերազով:
«Իսկ ի՞նչ եր տեսնում
Մեռնող այն բազեն
Այդ անապատում
Անտակ ու անեղը...
Ինչու յեն նրանք,

Մեռնելով՝ հավեա
Հուզում հոգին մեր
Իրենց սիրնվ այդ՝
Դեպի թռիչքը,
Դեպի յերկինքը...
Ի՞նչն ե պարզ այնտեղ...
Չե վոր կարող եմ
Յես ի՞նքս իմանալ
Այդ ամենը — գեթ
Մի փոքր պահով
Յերկինք թռչելով:
Ասաց — և արակ:
Վորորված, վորպես
Փայլուն մի ողակ՝
Թռավ առաջ նա —
Յեվ արեի գեմ
Փայլեց, ի՞նչպես մի
Բարակ ժապավեն:
Սորալու համար
Ծնվածը — թռչել
Ո, անկարող ե...
Մոռանալով ա'յս —
Բնկավ քարին նա,
Բայց չփշըլեց,
Այլ ծիծաղեց լոկ.
«Ահա՝ թե վորն ե
Յերկինք թռչելու
Հիմար հաճույքը...
Բնկսելու մեջ ե...

Հիմմր թռչուններ...
Հողին անլնտել,
Զանձրացած այնտեղ,
Նըանք ձգտում են
Դեպի յերկինքը —
Յեկ կյանք են փնտրում
Անապատում տհթ:
Այնտեղ — դատարկ ե.
Այնտեղ լույս շա'տ կա,
Բայց չկա այնտեղ
Ուտելիք, չկա
Կենդանի մարմնի
Համար հենարան
Ել ինչի՞ յե այդ
Հպարտությունը...
Ել ինչի՞ յե այդ
Հանդիմանանքը...
Նրա համա՛ր, վոր
Ծածկեն նըանով
Իրենց տենչերի
Խելառ ընթացքը,
Վոր նըանց յետե
Քողարկեն իրենց
Անպետքությունը
Այս կյանքի համար...
Հիմմր թռչուններ...
Բայց չեն խարի ինձ
Այլև նըանց
Խենթ զբույցները...

Յես ինքս գիտեմ
Ամեն ինչ հիմատ
Յես ինքս արդեն
Տեսա յերկինքը...
Վեր ճախրեցի յես
Յեկ չափեցի այն,
Տեսա անկումը,
Բայց չմեռա՛ յես,
Այլ ավելի յեմ
Հավատում ինքս ինձ...
Թող նըանք, ովքեր
Չեն սիրում հողը —
Ապրեն սուտով լոկ...
Յես գիտեմ հիմա
Ճշմարտությունը —
Յեկ նըանց կոչին
Չեմ հավատում յես
Հողի ծնունդ եմ —
Հողնկ կապրեմ յես,
Յեկ կծկըվեց նա
Պիրկ՝ քարի վրա՝
Իրենով հպարտու —
Փայլում եր ծովը
Վառ լույսերի մեջ,
Յեկ ալիքները
Զարնըլում եյին
Ավերին՝ ահեղ:
Նըանց վորոտում

Թնդում եր յերգը
Բազեյի մասին
Յել գողում ելին
Ժայռերը՝ նրանց
Հարվածներից գնն
Յել յերգից նրանց.—
«Խոլ-խիզախների
Խենթությանը վեհ
Յերգում ենք փառք մենք,
Խոլ-խիզախներ՝
Խենթությունը վեհ —
Ո, ա'յս ե ահա
Կյանքի իմաստը...
Ո, քաջ բազե, — գու
Կովում քո դաժան
Վոստիխների գեմ
Յեզար արնաքամ...
Բայց կզա որը
Յել քո արյունի
Վառ կաթիխները՝
Կայծերի նման՝
Կըբոքնկվեն մեր
Կյանքի խալաբում
Յել բազմաթիվ քաջ
Սրտեր կըշառեն
Ծարավով լույսի
Յել ազատության
Թեկուզ մեռար գու,

Բայց յերգերում քաջ
Յեվ վողով արի
Ու խիզախ մարդկանց —
Հնդմիշտ կլինես
Պազծառ որինակ,
Հպարտ որինակ...
Խոլ-խիզախների
Խենթությանը վեհ
Յերգում ենք յերգ մենք...»

Վաւնակայ
Լեգենդ



Անտառում ապրում եր փերին,
Գետում լողանում եր անվերջ.
Մի անգամ անզգույշ գտնըվեց —
Յեկ ընկավ ձկնորսի թոռի մեջ:
Ձկնորմները խիստ վախեցան,
Բայց այդտեղ եր պատահի Մարկնն,
Նա գրկեց փերուն համարձակ,
Սկսեց համբուրել կրքոտ
Իսկ փերին, ճկուն ճյուղքի պէս,
Թևերում նրա գալարվում եր,
Նայում եր Մարկոյին անվերջ
Յեկ ինչ-վոր բանի ծիծաղում եր...
Ամբողջ որը գուրգուրեց Մարկոյին,
Բայց իջավ գիշերը հենց —
Զքացավ ծիծաղկուն փերին,
Մարկոյի հոգին տիրեց...
Զոր-գիշեր Դանուրի ափերին
Թափառում, կանչում ե Մարկոն հեք,
Հառաչում ե. «Ո՞ւր ե փերին».
Ալիքներն ասում են. — «Զգիտենք»
Բայց ճշաց նա նրանց. «Խարհում եք,





Ինքներդ եք նրա հետ պարում...
Յեվ նետեց իրեն հիմարը
Դանուբի՝ մեջ, վոր գտնի փերուն,
Լողանում ե փերին Դանուբում,
Ինչպես և Մարկոյից առաջ,
Իսկ Մարկն ել չկա... Բայց, տեսէք —
Իր մասին գոնե յերգն այս մնաց...

Իսկ դուք աշխարհում կապրեք
Վորդերի նման կույր ու սին, —
Զեր մասին վհձ զըույց կասեն,
Վհձ յերգեր կերգեն ձեր մասին...





Ильинъ

Сказка

I

Դ

առնում ե արքան պատերազմից,
Գնում ե — զայլույթից դողում ե,
Լսում ե — թվի յետկից
Մի աղջիկ ծիծաղում ե:

Ահեղ կիտելով հոնքերը գեղին
Արքան մտրակեց ձիուն՝ փնչալով,
Հարձակվեց վրան, ինչպես փոթորիկ,
Յեվ գոռաց՝ զրահը ցնցելով.
— «Ի՞նչ ես դու» — գոռաց նա չար ու կոսկոտ,—
«Ի՞նչ ես դու, աղջի, ցցել ատամներըդ.
Կործանեց, հաղթեց ինձ թշնամին,
Իմ ամբողջ զորքը կոտորվել ե.
Գերի յե ընկել շքախումքըս վողջ,
Գնում եմ ահա, վոր նոր զորք բերեմ.
Յես — արքան եմ քո, սիրուս — վիշտ ու վոխ,—
Հիմար ծիծաղդ յես վճնց համբերեմ».

Շապիկը կրծքին շտկելով հազիվ
Աղջիկը ասաց արքային զաղիր.
— Յես խոսում եմ, տես, հետն իմ սիրածի, —
Տեր-արքա, դու, լավ ե — հեռացիր. —



Արքաների հետ խոսելու համար
Սիրողը յերբ ե ժամանակ հարում.
Յերբեմն սերբ վառվում ե արագ,
Քան մոմն՝ աստուծո պայծառ տաճարում.

Մոլեգնեց արքան բարկությունից չար,
Հրաման տվեց իր խմբին խոնարհ.
— «Զնդան նետեցեք այս լիբր աղջրկան,
Կամ, լավ ե, իսկույն խեղեցեք նրան».

Մամածըոելով մոռւթները հեղ՝
Արքայի մարդիկ թափեցին վրան,
Շըշապատեցին չար դմերի պես —
Մահին հանձնեցին դժբախտ աղջրկան.

II

Լեցուն ե մահը միշտ չա՛ր հույզերով,
Բայց այդ որը նաև փոխվել եր ասես.
Չե՞ վոր գարնանը սերմերը սիրո
Ուռչում են անգամ այդ պառավիլ մեջ,
Զանձրալի յե հար նեխած մսերում
Վոչընչացնել հիվանդություններ.
Յերբեմն ուզում ես ապրել անողուտ,
Ամեն մի ըստին մահով չընդունել
Բոլորը՝ նրան տեսնելու պահին՝
Զգում են միայն սարսափ անիմաց.
Զանձրացնել եր նա մարդկային ահից,
Թաղման ծեսերից, փոսերից այն բաց
Զբաղված գործով անշնորհակալ՝
Այս կեղոսու ու մութ աշխարհի վրա —

Իր գործն հմտորեն կատարում ե հար —
Բայց ավելորդ են համարում նրան:
Վիրավորիչ ե, իսրակե, սա քիչ.
Բարկանում ե մերթ մարդկանցից նա ել,
Յեվ, բարկանալով, տանում ե կյանքից
Վաչ նրանց հաճախ, ում պիտք ե տանել
ե, սատանային սիրլ նա գուցե,
Անհագուրդ շնչի դժոխքի հրով,
Հեկեկա սիրո ցավից ու խոցից,
Նրա հետ մեկտեղ արքենա սիրով...

III

Աղջիկը՝ կանգնած Մահի առաջին՝
Սպասում ե հարկածին Մահին
Փնջում ե մահը, — խղճում ե զոհին.—
— «Ինչքան ել ջահելին ե, նայիր...
Ի՞նչ ես արքային ասել կոստարար.
Սպանեմ պիտի քեզ դրա համար...»
— Ո, մի բարկանա, — աղջիկը ասաց.
Խնչն յես իդուր բարկանում վրաս.
Առաջին անգամ համբուրում եր ինձ
Սիրած՝ թվի կանաչ հովանում,
Իսկ արքան՝ վախչում եր պատերազմից.
Ի՞նչ արքա, ի՞նչ բան — այդ լույս վայրկանում...
Դե, յես ել ասի արքային, նրան.
— Հեռացիք, արքա՛, այստեղից! —
Լա՞վ եյի ասում, կարծես թե, — սակայն
Տես՝ ինչքան յեղակ անստեղի...

Ե՞ս, Մահից, գիտեմ, աղատում չկա.
Մեռնելու լիմ, գիտեմ, չըսկրած, —
Բայց ամրող հոգով խնդրում եմ, ով Մահ, —
Թույլ տուր, վոր մեկ ել համբուրեմ նրան...

Տարորինակ եր զրույցն այս Մահին.
Ո՞վ ե Մահվանից նման բան ուզում...
Մտածեց՝ ել գործ կը մնամ իրեն,
թէ չհամբուրվեն մարդիկ աշխարհում...

Յեվ, տաքանալով արկի ներքո,
Մահն ասաց՝ մոտիկ կանչելով ոձին.
— «Թնա՛, համբուրվիք — և յեկ յեկ շուտով.
Գիշերը՝ քննն ե, կըսպանեմ — լուսին».

Յեվ նստեց քարին — Ոձը ժանիքն իր
Մահվան գերանդին ե լիզում:
Աղջիկը բախտից հեկեկում ե,
Փնչում ե Մահը. — «Դե գնա՛, գե, շնւտու»

IV

Գարնան արկով քնքուշ տաքացած,
Մահը արձակեց արեխները հին,
Հենվեց չոր քարին — և խորը քնեց,
Յեվ վատ մի յերազ այցելեց Մահին.

Իրեկ կայենը, ծնողը նրա,
Իր թոռանթոռի՝ չար հուգայի հետ,
Յերկուսն ել զառամ, — յենում են լեռը,
Յերկու իժի պես սողում են կամաց:



— «Տեր», — հառաջում ե, մռայլ կայենք,
Յերկինք նայելով մարած աչքերով։
«Տեր» — հայցում ե չար իսկարովստացեն՝
Աչքերը հողից չբարձրացնելով։

Վերը, ամսի մեջ, լույս լերան վրա
Տերն, ընկողմանած, կարգում ե մի գիրք.
Վառ աստղերով ե այդ գիրքը գրված,
Մի եջն ե նրա — Ծիր-Կաթինն անհուն։

Կանքնած ե վերը Հրեշտակապետն՝
Հսպիտակ ձեռքում — կայծակների խուրձ,
Ուղևորներին ասում ե նա խիստ.

— «Հեռացեք, — աստված ձեզ չի ընդունի»

— «Միքայել» — տխուր հայցում ե կայենն.
Մեծ ե հանցանքս աշխարհի հանդեպ՝
Ցես ծնեցի կյանքն ըստանանողին,
Ցես եմ հայրն ըստոր, անիծյալ Մահի»

— «Միքայել» — տխուր ասում ե Հուդան.
Դիտեմ կայենից հանցապարտ եմ յես,
Քանզի մատնեցի գարշելի Մահին
Լույսի պիտ պայծառ սիրտը աստուծու»

Ցես աղերսում են նրանք յերկուսով.

— Միքայել — տերը մեզ մի խնաք միայն,
Թող մի խոսք ասի, թող խղճա լոկ մեզ —
Չե վոր ներումն մենք չենք աղերսում»

Հրեշտակապետն ասում ե կամաց.

— «Եթիցս արդեն ասել եմ նրան.
Յերկու անգամին նա վոչինչ չասաց,
Յերրորդ անգամին նա խիստ բարպառեց.
— Իմացի՞՝ քանի զեռ Մահը կյանքում
Կործանում է շունչ ու ծիլ կենդանի —
Չիք ներում նրանց — Կայեն-Հուդային»

Այստեղ Մատնիչն ու Յեղայրասպանը
Տիուր վոռնացին և հեծկլտացին,
Յեկ, գրկած իրաբ, գլորվեցին ցած
Լերան ներքեկ ճահիճը նեխած։

Իսկ մութ ճահիճում հրճվում են, խաղում
Մարդակեր դեմք ու սատանաներ —
Յեկ թքում են բութ նրանց յերեսին
Ճախճախուտային կապույտ կրակներ։

V

Մահը արթնացավ կեսորին մոտիկ
Նայում ե — աղջիկը չի յեկել դեռ
Փնչում ե քնկոտ. «Տես անամոթին, —
Գիշերն, արի տես, խիստ կարճ ե յեղեր»

Քաղեց մի հասած արևածաղիկ,
Հոտոտեց, հրճվեց՝ արկի ներքո
Դիտելով ծաղկած ծառերի գեղին
Տերևներն՝ ասես դարձած վուկեգույն»

Յեկ արեգակին նայելով — հանկարծ
Յերգեց նողկալի իր ձայնով հանգած. —

— «Մարդիկ՝ ձեռքով չարադեմ՝
Մերձակորին սպանում —
Յեկ թայում են, և յերգում.
«Ի վերին Յերուսաղեմ»

Զեմ հասկանում յես վոչինչ.
Բոնակալը իր ձեռքով
Սպանում է մարդկանց միշտ
Յեկ միշտ թաղում — նույն յերգով։

Ազնիվ ե թե ավազակ! —
Հենց վոր ուզում են թաղեն,
Նոյնին են յերգում շարունակ.
— «Ի վերին Յերուսաղեմ»։ —

Հիմարի թե սոտրի,
Հենց վոր ձեռքով իմ քաղեմ —
Յերգում են միշտ բոլորին.
— «Ի վերին Յերուսաղեմ»։ —

VI

Նա յերգը յերգեց և խիստ դժգոհեց.
Անցել ե արդեն ժամ ու ժամանակ —
Իսկ Աղջիկը դեռ չկա, չի գալիս.
Սա — վատ ե. Մահը — չի սիրում հանաք,

Դառնալով դժնի ու չար առավել —
Հագակ Մահը իր տրեխները հին,

Յեվ, հաղիկ իջավ լուսընկա գիշեր՝
Ճանապարհ ընկայ ամպի պես մթին:

Քիչ գնաց — մեկ ել տեսնում ե ահա.
Ցողապատ, դալար թափուտի ներքո
Նստած ե, գալնան զիցուհու նման,
Աղջիկը՝ շաղած լուսնյակի ցոլքով:

Վաղ — գարնանային հողի պես տկոր՝
Բացված ե նրա կուրծքը անամոթ,
Յել թավ, մետաքսյա մաշկի վրա, խոր,
Աստղերն են փայլում համբույրների տոթ: —

Աստղերի նման կուրծքն են զարդարում
Դիրգ ստինքների պտուխները հուր, —
Յեվ, աստղերի պես, աչքերն են նայուա
Վեր՝ կաթն-Ծիրի ճամփեքին մաքուր:

Կապույտ ստվերներ աչքերի տակին,
Շրթերը — կարմիր վերքերի նման,
Գլուխը դրած նրա ծնկներին՝
Հոգնած, հագեցած՝ նիրհել ե տղան:

Նայում ե Մահը — և բոցը քենի
Մարում ե գանդաղ իր դատարկ գանգում:
— «Յեվայի նման այդ ի՞նչ ես ելի
Թագնըլիլ աստծուց խոտի արանքում»

Յերկընքի նման մարմով իր լուսեղ
Իր սիրած տղին ծածկելով Մահից —

Պատասխան տվեց Աղջիկը խիզախ.

— Սպասիր մի քիչ, գեռ մի հայոցի,
Աղմուկ մի հանի, մի դիպչի սրան,
Մի հնչեցըու գերանդին քո սուր.
Կըգամ, կրմանեմ խկույն գերեզման —
Միայն թե սրան — յերկար կյա՞նք դու տուր:
Մեղավոր եմ յես, չեկա ժամկետին,
Կարծում եյի, վոր — դու շատ ես մոտիկ,
Թույլ տուր սիրածիս յես գրիմ ելի —
Կյանքը նրա հետ շատ շանկալի...
Նա ել — լճիլ ե շատ. նայիր՝ հուրհուրան
Ինչպիսի չընադ, ինչպիսի վսեմ
Հետքեր ե թողել նա կրծքիս վրա.
Տես՝ կակաչներ են կրակե ասես...»

Մահն, ամաչելով, կամաց ծիծաղեց.

— Արեի հետ ե համրուրվել ասես...
Բայց — մենակ դու չես իմ հոգսը կյանքում.
Շատերին պիտի յես մահ տամ ու քուն.
Յես ժամանակին լա՛վ եմ ծառայում,
Գործ շատ կա, իսկ յես — զառամ եմ արդեն.
Ամեն մի վայրկանն ինձ թանգ ե կյանքում —
Հալաքվիր, աղջի, ժամանակն ե, դե...»

Պնդում ե աղջիկն. —

« — Իմ սիրածը ինձ
Յերբ գրկում ե — ել վնչ յերկինք, վնչ հոդ.
Լցվում ե հոգիս կարոտով աննինջ,
Վառվում ե իմ մեջ յերկնային մի շող...»

Ել սարսափ չկա գալիքի համողեալ,
Վնչ մարդ ել պետք, վոչ յերզինք անուռն.
Մանկան պես — խինդը իրեննվ ե խենթ,
Ցեվ իրեննվ ե սերը հիանում...»

Լուռմ ե մահը, մտածկոտ ու սե, —
Եհ, վինց կասեցնի այս յերգը անվերջ...
Չիք աստված կյանքում — արեից վսեմ,
Ցիք կրակ — սիրո կրակից անշեջ...»

VII

Լուռ ե մահը, իսկ զրուցներն աղջըկա
Հալում են չոր վոսկորները նրա հին,
Մերթ սառեցնում և մերթ կիզում են նրան, —
Ի՞նչ պիտի տա Մահու սիրտը աշխարհին.

Մահը — մայր չե, բայց կին ե նա և նրա
Սիրտն ել անշոշտ մտքից ուժեղ ե և իստ.
Իր մութ սրտում կան բողրոջներ հուքհուքան
Կարտանքի, վրդովմունքի և խղճի.

Նըանց, ում նա սիրում ե խոր իր սիրով,
Ում սիրով վոր չար կարոտով ե լեցուն —
Գիշերները նա վորախիմ կարոտով
Մեծ հանգըստի զրուցներ ե շնչում.

— «Եհ, ինչ, — ասաց Մահը. — «Հըաշք թող լինի.
Թույլ եմ տալիս — ապրիր, ապրիր գու, միայն...
Միայն թե յես ընդմիշտ քեզ մոտ կլինեմ,
Սիրո կողքին յես կլինեմ հավիտյան...»

Այդ որվանից Սերն ու Մահը, ինչպես՝ քույրեր,
Միասին են շրջում կյանքում մինչև հիմա,
Սիրո հետքից Մահն ե քայլում քայլով յերեր,
Սուը գերանդին ուսին, միջնորդ կնոջ նման —
Քայլում ե նա, իր քրոջով հմայված հա՛ր —
Ցեվ ամենուը, թաղման ծեսին, թե հարսանքին —
Նա անդապրում, անշեղորեն կերտում ե վառ
Խինդը սիրո և բերկրությունը կյանքին.



Աւելոս
Արզակն
—
Եւսարտութեաւ
Սրբաւար
Փազտփորտչ
ՄԱՍԻՆ



Մամի շատ ճշմարիտ պատմություն ե և
յես այն կոկում այսպէս.

— Հանկարծ այն պուրակում, ուր տեղի ունեցավ
այս հետաքրքիր գեղաքը, բոլոր յերգող թոշուններից
ընդհանուր ուշադրություն գրավեց մեզը, վորի յեր-
գած յերգերը համակված եյին վնչ միայն հույսե-
րով, այլև համոզվածությամբ:

Մինչ այդ, բոլոր թոշունները, վախեցած վրա հա-
սած գորշ ու գմնի յեղանակից, յերգում եյին յեր-
գեր, վորոնք այն պատճառով եյին միայն յերգ
անվանվում, վոր յերգվում եյին. Նրանց մեջ տիրա-
պետում եյին մելամաղձու և անհոյս նոտանները, և
ունկընդիր - թոշուններն սկզբում համարում եյին
գրանք մահամերձի խոսլոց, բայց հետո հետզհետե
րնտելացան և նույնիսկ սկսեցին գտնել գրանց մեջ
զանազան գեղեցիկություններ — մի բան, վոր, այսու-
ամենայնիվ, նրանցից մեծ ջանք եր պահանջում:

Պուրակում բոլորին տոն եյին տալիս ազգավանքը,
թոշուններ, վոր իրենց եյությամբ հույսեն են և, բա-
ցի քիչ թե շատ բարձր կոկոցից, վոչչչ ընդունակ
չեն. Ուրիշ ժամանակ նրանց վրա ուշադրություն ել-



Հեյին դարձնի, բայց այժմ, յերբ նրանց ձայները
տիրապետում ելին, նրանց լսում ելին և նույնիսկ
համարում նրանց շատ իմաստուն թռչուններ ինչ
նրանք, նկատելով այդ, մոռայլ յերգում ելին.

Ղառո... բախտի դեմ մղած մարտում
Մեղ, խեղճերիս, փրկում չկա...
Ինչի վրա աչք ես նետում —
Վիշտ եռ ու ցավ մոխիր ու մահ...
Ղառո... բախտը գնո, անողնք ե.
Իմաստունը խոնարհվում ե...

Ղառո... Ղառո... Զանձրալի յերգ, բայց ուժեղ. նա
ճնշում եր ամբողջ պուրակիս
Յեկ հանկարծ ճնշեցին խիզախ յերգեր...
Ամբողջ պուրակը, վոր շատ եր լսել յերգեր,
թպրաց՝ զարմացած և կամացուկ շրշելով ճյուղ-
քերը. Յեկ նույնիսկ սոխակները, վորոնք միշտ եւ
վատ չեն յերգում, վորովհետև նրանք մաքուր ար-
վեստի քուրմենք են, հաճույքով լսում ելին և ասում.
— «Արի տես, վոր այս յերգիչը կայծ ունի...»
Յեկ, ասելով այսպես, զաղմնի հպարտանում ելին
իրենց անաշոռությամբ
Իսկ յերգիչը յերգում եր.

Ցես լսում եմ ագռավների
Ճուրտ և խավար կոկոյց.
Չեմ վախենում յես խավարից՝
Մաքով առույդ և առողջ...
Ո՞վ խիզախներ, հետեւք ինձ,

Կորչի խավարն ընդհանուր,
Այլինք սրտերն հրով անբիծ —
Յեկ լույս կընի ամենուր...

— «Ուժեղ ե յերգում, — ծանոթագրում ելին սո-
խակները... — «Առույդ ե, ինքնավստահ, — յերաժըշ-
տական չե, բայց — ուժեղ եռ...» — և, խորիմաստորեն
մաքրելով քթիկները, լսում ելին շարունակությունը.

Ով պայքարում ե մենում աղնկ —
Միթե պարտված ե նա, ընկած.
Պարտված ե նա լոկ, ով պայքարից
Փախչում ե կուրծքը անով պահած...
Ընկերներ, նա յե ընկած, ով վսեմ
Գործից սարսելով, վախչելով — սակայն
Սլուռում ե զատել պայքարի մասին
Թաղվելով մուժում փելսովայական...

— Նը մ... նա շատ ինքնուրույն հայցագներ ունի...
Նշեցին սոխակները: — Եկուղելինք իմանալ — զա ինչ
թռչուն եռ...» — հետաքրքրվեցին նրանք,

Ընկերներ, լուս թող ընկածները.
Կասկածանքներն են կուրացըել նրանց.
Պատիվը նրանց կրծքում լույլ ե,
Ընկերներ, յեկեք մենք գոռանք նրանց.
Հեռու, — մշուշը ձեր իմաստության
Դարձըց գիշերն ավելի խավար, —
Թունավորում ե նա ոձի նման
Սրտերը ջահել և մաքերը վառ:
Հեռու... Պատերազմ ե հայտարարված

Աստ' առաջնություն շահելու համար՝
Աստվածներին հին...

— «Սա իխզմի ե, — ասացին սովակները. — Ո, այս... սա շատ ե իխզախի...»

Պուրակը լսում եր և զգում ինչ-վոր լավ և ուժեղ բան, այդ զգացմունքը լցնում եր նրան տաքությամբ ու լույսով, և նույնիսկ ծառերի հին, գորշ մամուռով ծածկված ճյուղքերը շշնջացին անցյալ որերի մասին. Այդ հիանալի գալրնանային որեր ելին, յեր պուրակում նոր ելին սկսել ծաղկել ծաղկներու ու հույսերը, յերը թռչունները յերգում ելին հնչել յերգեր արելին, իսկ ամպերից ազատ յերկինքը թվում եր անսահման խորը և կարծես կանչում եր թռչուններին փորձել թերերի ուժը, — համսել նրա խորությանը, Եյն լավ որեր ելին, յեր հարկ չկար ստիպելու քեզ ապրել, վորովհետեւ ուղում ելիր ապրել, — կար նպատակ և հույս կար համուշու նրան, թեվ այդ որերը հայտնվեցին պուրակի առջև և, աստղերի նման, փայլեցին մշուշում, վոր պուրակից ծածկում եր յերկինքը.

Թռչունները թպրտացին և կենդանացան. Ո՞ւր և յերգիչը, թող նա ընդունի հիացմունքի և շնորհակալության տուրքը. Դա, յերկի, հոյակապ, գեղեցիկ թռչուն եւ.

Նրանք հավաքվեցին ամբողջ յերամով և նետվեցին այնտեղ, վորտեղից նրանց բնդառաջ ելին թըռչում աշխուժ և հպարտ հնչյունները.

Բայց յերը նրանք թռան-յեկան, տեսան, վոր այդ պարզապես մի սարյակ եւ—ամենասովորական, գորշ,

մոմե քթիկով մի սարյակ, նա նստած եր կաղնու ճյուղքին և շիրոթված եր իրեն ցույց տված պատվից. փոքրիկ, հուզված և անհանգստացած, նա բոլորի մեջ զարմանք առաջացրեց և վոչ-վոքի գորը չեկալի.

Հեռում... Պատերազմ և հայտարարված
Աստ' առաջնություն շահելու համար՝
Աստվածներին հին...

Յերք այս ճշում ե արծիվը, բազեն, վերջապես անգղու, — զա և՛ գեղեցիկ ե, և՛ հուժկու. բայց սարյամկը, սարյակը, վոր պատերազմ և հայտարարում աստվածներին... Այստեղ կա վորոշ անհամապատասխանություն, ինչ-վոր տարրորինակ և ծիծաղելի բան ինչնի անպայման սարյակը, և վաչ կարմրակատարը, կամ խածկտիկը...

Զարմացած և վիրավորված թռչունները նայում ելին սարյակին և մտածում. «Ինչ և լինելու հիմա», Բայց այստեղ մի հսարամիտ կարմրակատար հարց-րեց սարյակին.

— Լսեցէք, այդ գնեւք եյիք հիմա յերգում:

— Յես... — պատասխանեց սարյակը, — այս, այդ

յես եյի յերգում:

— Հըմ... իսկ գուք ինչնի այդ կապացուցեք, — Այսինքն՝ մենք, իհարկե, չենք կասկածում ձեր ընդունակություններին, բայց...

Սարյակը ցնցվեց, նրա փետուրները ցցվեցին և նա յերգեց.

Մեր ստեղծած մե գլշերվա մթնում
Անցնում են, թռչում գորշադորշ բուեմ...

Յեկ նրանց մռայլ աչքերն են փայլում
 Յեկ չար, և դաժան, և բիրտ առավել...
 Հնչում են հնչեղ ճիշերը նրանց,
 Քրքջում են նրանք հեծկլում, լալիս,—
 Անեծք են կարգում արեստ որվան,
 Յեկ ծիծաղում են գիշերը դալիս...
 Յեկ թե ընկնեյին շղթաները հին
 Զահել պուրակի վրայից մի որ —
 Վայրի բուերը կոչընչանյին
 Յեկ վեհ բազեներ կըթռչեյին նոր...
 Բայց բազեները — և թույլ, և ուժատ,—
 Մտել են մթլն ձորերը անով,
 Յեկ չարանում են անուժ, հուսահատ՝
 Ուրիշի ուրախ ձայնը լսելով...
 Կախվել են նրանց թեկերը անուժ,
 Յեկ, ամոթահար, սրտերն են ննջեւ—
 Մաքը և պատվի կանչերին անհուն
 Չեն լսում ազատ թռչւնները ել...

Թոչուններից վոմանց այս յերգը թվաց անձնական
 Վիրավորանք և նրանք սուլեցին սարյակին, իսկ
 կարմրակատարն ասաց.—

— Լավ, այսքանը բավական ե մեղ, Բայց ա՛յ թե
 ինչ ասացե՞ք դուք, այսպիս ասած, արթնացնում եք
 մեր զիտակցությունը... հըմ... իսկ եյապես, դուք
 ինչ իրավունք ունեք այդ անելու. Այսինքն, յես
 ուզում եմ ասել — հանուն ինչի յեք դուք յերգում:

Սարյակը զարմացավ* լուռ նայում եր հասարա-
 կությանը:

— Մենք, հասկանում եք արդյոք, ուզում ենք



ապահովել մեզ սխալներից, վորպիսիք, դուք գիտեք, մենք բավականին շատ ենք ունեցել, և այս նպատակով մենք կուղենայինք իմանալ ձեր սկզբանական և վերջնական կետերը — իմանալ, թե ուրեմն մեզ կտում և ինչնու, — հարցը դրեց կարմրակատարը և, ինքնարավական, շվացրեց ինչ-վոր ուրիշի յերգ. կարմրակատարներն, ինչպես հայտնի յե, սեփական յերգեր չունեն.

Սարյակը թպրտաց...

— 'Եես յելնում եմ այն անհոգղողդ համոզմունքից, վոր թաշունների բարձր կոչումը քնության ստեղծագործության ամենաարարդ և ամենաիմաստուն ակտն եւ Մենք չպետք եւ հոգնենք, մենք պետք եւ միշտ պայքարենք և ամեն ինչ հաղթահարենք, վորպեսզի արդարացնենք ինքներս մեզ՝ մեր սեփական աչքերում, վորպեսզի իրավունք ունենանք ասելու, ամբողջ անցյալը, ներկան և ապագան — այդ մենք ենք, և վոչ թե տարերքի կույր ուժի, Այն ճանապարհը, վորով պետք եւ մենք ընթանանք, ինձ հայտնի չե, բայց յես համոզված եմ, վոր պետք եւ առաջ գնաւ, Այնտեղ եւ յերկիրը, վոր արժանի յեւ պարգև լինելու այն վաստակների համար, վորոնք մենք կրել ենք ճանապարհին: Այնտեղ հավիտենական, անվերջանալի լույս եւ, այնտեղ կան մեզ անհայտ հրաշալիքներ, այնտեղ մենք կհրեժվենք մեր ուժի հայեցությամբ, և ամբողջ աշխարհը ասպարեզ կդառնա մեր գործերի, վորոնց վեհությունը անհնարին եւ պատկերացնել այժմ. այնտեղ մեր միտքը ամեն ինչ կլուծի, և մեր զգացմունքը



ները, հրաշալիորեն բարդացած, կրանան մեր առջև չճաշակած հաճույքների մի նոր աշխարհ, այնտեղ ենա — կյանքը, վոր արժանի յե մեզ... Հարգեցեք և սիրեցեք միմյանց, և, հպարտ ու խիցախ բանակով ընթանալով գետի հաղթանակ, չկասկածեք զնչ մի բանում, քանզի ինչ կա մեղանից բարձր... Յետ նայեցեք և տեսէք, թե ինչ եք յեղել դուք առաջ — այնտեղ, կյանքի արշալույսին, Զել այն ժամանակիա ամբողջ հավատը չարժեք այժմյան մի կաթիլ կասկածանքին: Սովորելով այդպես զարհուրելի կասկածել ամեն ինչի, ձեզ համար յեկել ե ժամանակ հավատալու ինքներդ ձեզ, քանզի միայն մեծագույն ելությունը կարող ե համեն այնպիսի կասկածանքի, վորպիսի կասկածանքի հասել եք դուք... Դեպի այնտեղ — յերջանկության յերկիրը... Դեպի այնտեղ — դեպի այդ հրաշալի «առաջ»-ը...

— «Առաջ» — բացականչեցին թռչունները, քանզի նրանց սրտերում բոցալառվեց հպարտությունն իրենցով:

Վոդուրության արցունքները և հավատը լցըին սարյակի աչքերը: Յեկ բոլոր թռչունները յերգեցին, և այնքան թեթև զգացին իրենց բոլորը, բոլորն զգացին, վոր սրտերում ծնվեց կրքուտ տենչանք կյանքի և յերջանկության:

— Սպասեցեք, թռւյլ տվեք... Յետ ձայն եմ խընդրում... Զայն տվեք ինձ...

Այդ ճշում եր փայտփորիկը կաղամալի գագաթից, և յերը նրան լսեցին, ապա իսկույն ձայն տվին նրան, վորովհետև նա շատ բարձր եր գոռում:

— Հարգելի պ.պ. և տ.տ. — խոսեց փայտփորիկոր — ներկայանում եմ. — յես — փայտփորիկն եմ: Յես սընվուում եմ ճիճուներով և սիրում եմ ճշմարտությունն, վորին անշեղ կերպով ծառայում եմ և վորը գըգում ե ինձ ասել, վոր ձեզ անամոթարար խարսում են: Բոլոր այդ յերգերը և ֆրանկըրը, վոր գուք այստեղ լսեցիք, հարգելի պ.պ., վոչ այլ ինչ են, քան անամոթ սուտ, վորը և յես այստեղ պատիվ կունենած ապացուցելու փաստերով... Այսո, փաստերով, հարգելի պ.պ. Իսկ հարցը էք պ. Մարյակին, վորտեղ են այն փաստերը, վորոնցով նա կարողանար հաստատել այն, ինչ ասաց: Այդպիսիք նա չունի, իսկ ինց զրա՞նք են հարկավոր նրան ավելի, քան ինձ. այդ փաստերն — ամեն ինչ են, հարգելի պ.պ. — և մենք բոլորս վնչ այլ ինչ ենք, քան վորքիկ փաստեր, վորոնք հաստատում են բնության իմաստության և զորության վիթխարի փաստը, վորին մենք պետք ե յենթարկվենք, ինչպես զավակները յենթարկվում են մորր:

— Քննարկենք անաչառ կերպով, ինչ կա այնտեղ — առջևում, ուր կոչում ե մեզ պ. Մարյակի, Դուք բոլորդ ել թեկ եք պուրակի ծայրը և զիտեք, վոր նրանից անմիջապես հետո սկսվում ե դաշտը, ամառը մերկ և արեանար, ձմեռը ծածկված սառը ձյունով. այնտեղ, նրա յեղերքին, կանգնած ե զյուղը և նրանում ապրում ե Գրիշկան, մի մարդ, վոր պարապում ե թռչուրսությամբ: Ահա առաջին կայարանն «առաջ»-ի ճանապարհին, վորի մասին այնքան շատ շաղակբատեց այստեղ պ. Մարյակը,

— Յենթաղբելով, վոր մենք առաջ ենք ձգտում համաձայն նրա ցանկության — վորի անշահությանը յես ինձ թոյլ եմ տալիս կասկածել, քանզի գիտեմ, վոր սարյակները, ինչպես և մյուս արարածները, չեն խուսափում ժողովրդականությունից, փառքից և այլն, — յենթաղբելով, վոր մենք բարեհաջող կերպով կիսուսափենք Գրիշկայի թակարդից և կթաճենք զյուղի կողքով, մենք կրկին կընկնենք դաշտը, իսկ նրա ծայրին կրկին հանդիպենք մի գյուղ, իսկ հետո — նորից դաշտ, — զյուղ, — դաշտ... և քանի վոր յերկիրը կլոր ե, ասկա մենք հարկադրված կլինենք անխուսափելիորեն վերադառնալ ա՛յն միենալուն պուրակը, վորի մեջ, տվյալ վայրկյանիս, յես բարձր պատիվ ունեմ խոսելու ձեզ հետո — Սա՞ յէ արդյոք այն յերկիրը, ուր, պ. Սարյակի խոսքերով, մենք պիտի պարզե ստանանք մեր վաստակների համար... Սա յէ արդյոք այն յերկիրը...

— Յես գիտեմ ձեզ, հարգելի պ.պ. և տ.տ., յես գիտեմ, վորքա՞ն բարձր եք զուք թոշում, բայց... վորքան ել զառն ե ինձ համար ասել ձեզ այդ, — յես գիտեմ և ա՛յն, վոր ձեզանից վոչ-վոք չի թոել և չի կարող թռչել իրենից բարձր! —

— Պարոն Սարյակի փորձը — զբավել ձեր ուշագրությունը՝ փայլուն և բարձր քրագների միջոցով ձեզ խարելով — պարզ ցույց ե տալիս ձեր մասին, իրու վողջախոհ սարդկանց մասին, նրա ունեցած կարծիքի բարձրությունը... Այդ փորձը պետք է խիստ կերպով պատժի, հարգելի պ.պ. և տ.տ....

Եւկ իր կատարած հասարակական պարտականու-

թյան գիտակցությամբ լցված, իմաստումն փայտփռուկը, հաղթանակող հայացք նետելով ունկընդիրունքի վրա, սկսեց փորել կաղամալի կեղեց, վորի ճյուղերի վրա բազմել եր նա:

Թոշունները լուս նայում եյին սարյակին և տեսնում եյին, թե ինչպիս նրա աչքերից մեկը մյուսի յետկից գլորվում եյին արցունքները ինչնու համար նա կարող եր արտասվել, յեթե վոչ — իր մեղքի համար նրանց առջև. Սյորքան չնչին, զորշավուն և ստախոս սարյակ...

Իսկ նա տիսուր նայում եր այստեղ, հեռուն, և նրա աչքերը կարծես թե հրաժեշտ եյին տալիս ինչ-վոր բանին

Լուռ եր պուրակը, և թոշուններն անշշուկ թոշում եյին իրենց տեղերը: Թուալ և փայտփորիկը, ուղեկըցված հարգալից խոնարհությամբ նրա իմաստության առջև:

Որն այնքան թախճալի յեր. կարծես ուզում եր լաց լինել ինչ-վոր բանի համար:

Ցեկ ահա սարյակը, վորը ստում եր, մնաց մենակ: Մնշարժ և ճնշված, նա նստած եր կաղնու ճյուղին, և միայն մի ճայ եր հետաքրքրությամբ նայում նրան կաղնու վարանոտ, գողգոջուն ճյուղի յետկից: Բայց դա նրան շուտով ձանձրացրեց և, հեղնական սուլելով, նա թռավ-գնաց:

Իսկ սարյակը մնաց, և, նստած կաղնու ճյուղի վրա, մտածում եր.


— Յես ստեցի, այն, յես ստեցի, վորովհետև ինձ անհայտ ե, թե ինչ կա պուրակից անդին, բայց

ԴԱՌԵ և ՆՐԱ ԴՈՐԴԻՆ

ախար հավատալը և հուսախն այնքան լավ ե... թես
ել ախր միայն ուզում եյի արթնացնել հավատ և
հույս — ահա՞ թե ինչն յես ստեցի... Նա, փայտփո-
ռիկը, գուցե և իրավացի յե, բայց ինչի՞ յե հարկա-
վոր նրա ճշմարտությունը, յերբ այն բարի պես
նստում ե թերի վրա... —

Ցեվ, շուրջը նայելով, խեղճ, փոքրիկ սարյակը
փետուրները ցցեց և խոժուվեց:

Ահա՞ և ամբողջ պատմությունը... Կարդալով այն,
որւ, իրարկե, կտեսնես, վոր սարյակը վեհանձն ե,
բայց հավատ չունի և դրա համար ել աղքատ ե հո-
գով փայտփորիկը լրջախոհ ե, բայց գոեհիկ, իսկ
թոշուն-ունկընդիրները տպավորվող են լոկ այն պատ-
ճառով, վոր հետաքրքրասեր են, բայց նրանք եյա-
պես անզգա յեն սրտով և մանը են, խայտառակ
կերպով մանը... Տեսնելով այս, գու կկարծես, վոր
յես ճիշտ չպատմեցի այս լալու չափ ծիծաղելի
պատմությունը. Մտածիր այդպես, յեթե դա քեզ
միիթարում ե, մտածիր...



ար Դըիմում խան Մոսալայմա ել
Ասվաբը և ուներ նա մի վրդի՝
Տոլայկ Ահալլա...»

Մեջքը հենած արրուտուսի վառ-դարչնագույն բնին,
կոյը մուրացկանը, թաթար, այս խոսքերով սկսեց
հիշողություններով հարուստ թերակղզու հին լե-
զուազներից մեկը, — իսկ պատմողի շուրջը, քարերի
վրա, — բեկորներ ժամանակի ավերած խանական պա-
լատի, — նստած եր թաթարների խումբը՝ վառ խա-
րթներով, վոսկեկար արախչիներով, Ցերեկո յեր,
արեք կամացուկ իջնում եր ծովը. նրա կարմիր շո-
ղերը ճեղքում եյին ավերակների շուրջը բարձրա-
ցած կանաչի մութ զանգվածը, վառ ներկերով պառ-
կում եյին քարերի վրա, վոր ծածկված եյին մամու-
ռով և ցանցված բաղեղի կպչուն կանաչով ժամին
աղմբկում եր հին չինարների ծառախմբում, նրանց
տերմանելն այնպես եյին շըշում, կարծես ողում թո-
րում եյին աչքի համար անտեսանելի ջրի առվակ-
ներ.

Ծեր մուրացկանի ձայնը թույլ եր և գողում եր,
իսկ նրա քարե գեմքն իր կնճիռներում վոչինչ չեր

արտացոլում, բացի հանգստից. դոց սերտած խոսքերը թափվում եյին մեկը մյուսի յետից, և ունկընդիրների առջև կանգնում եք անցյալի՝ զգացմանը թափով հարուստ՝ որերի պատկերը.

— Խանը ծեր եք, — ասում եք կույրը, — բայց կանայք շատ կային նրա հարեմում. Եթև նրանք սիրում եյին ծերունուն, վորովճետե նրա մեջ գեռ բավականին ուժ կար և կրակ, և նրա գուրգուրանքները շայում եյին և այրում, թեկուղ և նա ալեհեր եք, թեկուղ և նրա գեմքը ծածկված եք կնճիռներով, — ուժի մեջ և գեղեցկությունը, և վնչ թե քընքույշ մաշկի, կամ այտերի կարմրության.

Խանին բոլորն եյին սիրում, իսկ նա սիրում եք մի կաղակունու — լինունու Դնեպրի տափաստաններից, և միշտ գուրգուրում եք նրան ավելի սիրով, քան մյուս կիներին հարեմի, ուր կար յերեք հարյուր կին զանազան յերկրներից, և նրանք բոլորն ել գեղեցիկ եյին, ինչպես գաբրնանային ծաղիկներ, և նրանք բոլորն ել լավ եյին ապրում. Շատ համեղ և քաղցր ուտելիք եք հրամայում պատրաստել խանը նրանց համար, և միշտ թույլ եք տալիս նրանց, յեր կամենան, պարել, խաղալ...

Իսկ կաղակունուն նա հաճախ կանչում եք իր մոտ՝ աշտարակը, վորտեղից յերեսում եք ծովը. այստեղ կաղակունու համար նա ունեք ամեն բան, ինչ վոր հարկավոր է կնոջը, վորպեսզի նա ուրախ ապրի. քաղցր կերակուր և զանազան կտորներ, և վոսկի, և բոլոր գույների քարեր, և յերաժշտություն, և հաղագոյուտ թոշուններ հեռու յերկրներից, և սիրահա-

րի կրակե գգվանքներ, Այդ աշտարակում նա հըբճկում եք նրա հետ ամբողջ որեր, հանգստանալով իր կյանքի վաստակներից և իմանալով, վոր Ալալլա վորդին չի վոտնահարի խանության փառքք՝ գայլի պես թափառելով ուռական տափաստաններում և միշտ զերգանալով այնտեղից հարուստ ավարով, նոր կանանցով, նոր փառքով, թողնելով այնտեղ, իր յետերից, սարսափ ու մոխիք, դիակներ և արյուն.

Մի անգամ զերգարձակ նա, Ալհալլան, ուռակության կատարած ասպատակությունից, և շատ տոնական հանգեսներ սարքվեցին նրա պատվին, կզզու բոլոր մուրզաններն հավաքվեցին այդ տոնակատարություններին, յեղան խաղեր և խնճույք, աղեղներից կրակում եյին գերինների աչքերին, փորձելով ձեռների ուժը, և նորից խառում եյին, փառարաններով Ալհալլայի թշնամիների պատուհասի, խանության հենարանի խիզախությունը. Խոկ ծեր խանն ուրախ եք վորդու փառքին, Հաճելի յեր խանին իմանալ, վոր, յեր նա մեռնի, խանությունը կլինի ամուր ձեռքերում:

Հաճելի յեր այս նրան, և ահա նա, ցանկանալով ցույց տալ վորդուն իր սիրո ուժը, ասաց նրան բոլոր մուրզանների և բեկերի ներկայությամբ, — հենց այդտեղ, խնճույքին, թասը ձեռին, ասաց.

— Լավ վորդի յես դու, Ալհա՛լլա! — Փառք Ալլահին, և թող փառարանին նրա մարգարեյի անունը:

Եթև բոլորը փառարաններին մարգարեյի անունը հզոր աշաների խմբով. Այդ ժամանակ խանն ասաց.

— Մէծ և Ալլահի, Դեռ իմ կյանքի որով նա հա-

բություն ավեց իմ յերիտասարդությանն իմ խիզախ վորդու մեջ, և ահա ակեմում եմ յես ծեր աչքերով, վոր, յերք անհետանա նրանցից արեք, և յերք վորդերը կրծեն իմ սիրաը — կենդանի կլինեմ յես իմ վորդու մեջ, Մեծ ե ալլահը և Մոհամեդը — նրա մարգարեն: Լավ վորդի յես ունեմ, ամուռ ե նրա ձեռքը և պայծառ ե խելքը... Ի՞նչ ես կամենում դու առնել քո հոր ձեռքերից, Ալհա՛լլահ: Ասա՛, և յես կուտած քեզ ամեն ինչ քո ցանկությամբ...

Յեվ զեռ չեր լոել ձայնը ծերունի հոր, յերք բարձրացավ Տոլայկ Ալհալլահն և ասաց, պապղացնելով աշքերը՝ սե, ինչպես գիշերային ծովը, և վառ, ինչպես աչքերը լեռնային արծվի.

— Տներ ինձ ոռու լեռունուն, հրամայնդհայր Լոեց խանը — քիչ լոեց, այնքան ժամանակ, ինչքան հարկավոր եր դոզր սրառում ճնշելու համար — և, լոելով, հաստատուն և բարձր ասաց.

— Վերցրնւ: Յերք վերջացնենք խնճույքը դու կվերցնես նրան:

Բորբոքվեց կորիճ Ալհալլահն, մեծ ուրախությամբ փայլատակեցին արծվային աչքերը, կանգնեց նա ամրող հասակով և ասաց խանին — հորը.

— Յես գիտեմ, թե գոր ինչ ես նվիրում ինձ, հրամայող-հա՛լլա: Դիտեմ յես այդ... Քո ճորտն եմ յես — քո վորդին: — Վերցրնւ իմ արյունը ժամը մի կաթիլ — քսան մահով կմեռնեմ յես քեզ համար:

— Հարկավոր չե ինձ վոչինչ — ասաց խանը և թեքեց կրծեն նրա ալեհեր զուտիր՝ պսակաղարդված յերկար տարիների և բաղմաթիվ մեծագործությունների փառքով:

Շուտով նրանք վերջացրին խնճույքը և յերկուսն ել լուսո, կողք-կողքի, պալատից գնացին հարեմը:

Գիշերը մութն եր, վոչ աստղերը, վոչ լուսինը չեյին յերկում ամպերի յետից, վոր խիտ գորգով ծածկել եյին յերկինը:

Յերկար գնում եյին խավարում հայրն ու վորդին, և ահա խոսեց խան ել-Ասվարը.

— Որբ-որին մարում ե իմ կյանքը — և ալելի ու ավելի թույլ ե զարկում իմ սիրտը, ավելի ու ավելի պակասում ե և կրծիս հուրբ: Իմ կյանքի լույսն ու տաքությունն եյին կազակունու տոթ գգվանքները... Ասա՛ ինձ, Տոլայկ, միթէ նա այդքան հարկավոր ե քեզ: Վերցրնւ հարցները, վերցրու իմ բոլոր կինսերին նրա փոխարեն...

Լոռում եր Տոլայկ Ալհալլահն, հառաչելով:

— Քանի՞ որ ե ինձ մնացել: Քիչ որ ունեմ յես աշխարհում... Իմ կյանքի վերջին ուրախությունը — այդ ոռու ազգին ե, նա զիտե ինձ, նա սիրում ե ինձ, — ով ինձ հիմա, յերք նա չի լինի, կսիրի, — ծերունուս, ով, վահ մեկը բոլորից, վոհ մեկը, Ալհա՛լլա:

Լոռում եր Ալհալլահն...

— Յես ինչպես պիտի ապրեմ, իմանալով, վոր գոռ գրկում ես նրան, վոր քեզ համբուրում ե նա: Կնոջ առջե — վոչ հայր կա, վոչ վորդի, Տոլայկ: Կնոջ առջե — մենք բոլորս տղամարդիկ ենք, վորդի իմ... Ցավալի կլինի ինձ համար ապրել վերջին որերս... Թող բոլոր հին վերքերս բացվեյին մարմնիս վրա, Տոլայկ, և հորդեյին արյունս, լավ ե՛ թող Առւացնեյի յես այս գիշերը, վորդի իմ...

Լոռում եր նրա վորդին... կանգ առան նրանք հարեմի դռան առաջ և, գլուխներն հակած կըծքերին, յերկար կանգնեցին նրա առջև Խավար եր շուրջը, և ամպերը փախչում ելին յերկնքում, իսկ քամին, ցընցելով ծառերը, կարծես յերգում եր, աղմկում ծառերով...

— Վաղուց ե յես սիրում եյի նրան, հա՛յր...—կամացուկ ասաց Ալհալլան:

— Գիտեմ... և գիտեմ, զոր նա քեզ չի սիրում...—ասաց ինձնը:

— Պատովում ե իմ սիրտը, յերբ յես մտածում եմ նրա մասին,

— Իսկ իմ հին սիրտը ինչով ե լցված հիմա, թել կրկին լոեցին, Հառաչեց Ալհալլան:

— Յերեսում ե՝ ճիշտն ասաց ինձ իմաստուն-մոլուն. — Կինը տղամարդուն միշտ վասակար ե. յերբ նա լավը ե՝ նա ուրիշների մեջ ցանկություն ե արթնացնում տիրել նրան, իսկ իր ամուսնուն մատնում ե իսանդի տանջանքներին. յերբ նա տգեղ ե՝ նրա ամուսինը, նախանձելով ուրիշներին, տառապում ե նախանձից: — Իսկ յերբ նա վոչ լավ ե, վոչ վատ — տղամարդը նրան չքնաղ ե դարձնում և, տեսնելով զոր սիսարվել ե, կրկին տառապում նրա, այդ կնոջ պատճառով...

— Իմաստությունը — զեղ չե սիրո ցավի, — ասաց ինձնը:

— Խղճանք իրար, հա՛յր...

Բարձրացրեց գլուխը հայրը և տիսուր նայեց վորդուն:



— Սպանենք նրան, — ասաց Տոլայկը:
— Դու քեզ ավելի՞ յես սիրում, քան նրան և ինձ,—
մտածելով, խուլ ասաց խանը:
— Ախար դու ել:
Յեղ կրկին նրանք լոեցին:
— Այսու—Յես ևս, — տխուր ասաց խանը: Վշտից
նա յերեխա գարձավ:
— Ուրեմն ինչ—սպանենք:
— Յես չեմ կարող քեզ տալ նրան, չեմ կարող, —
ասաց խանը:
— Յես ել չեմ կարող այլիս սպասել. պոկի՞ր իմ
սիրտը կամ տնուր նրան ինձ:
Խանը լուռ եր:
— Գցենք նրան լեռից ծովը:
— Գցենք նրան լեռից ծովը, — կրկնեց խանը վոր-
դու խոսքերը, ինչպես վորդու ձայնի արձագանքը:
Յեղ այդ ժամանակ մտան նրանք հարեմը, ուր
կինն արդեն քնած եր հատակին, փարթամ գորգի
վրա, կանգ առան նրանք նրա առջե, նայեցին. յեր-
կար նայեցին նրան. Ծեր խանի աչքերից թափում
եյին արցունքներն արծաթյա մորուքին և պատրում
եյին այնտեղ, ինչպես մարգարիտներ, — իսկ նրա
վորդին կանգնած եր, փայլատակելով աչքերը և իր
ատամների կրծտոցով, կիրքը զսպելով, արթնացըց
կազակուհուն. Արթնացավ նա—և նրա յերեսին,
քնքուշ ու վարդագույն, ինչպես արշալույսը, ծաղ-
կեցին նրա աչքերը, ինչպես մանիշակներ, Զնկատեց
նա Արհալային և ալ շրթունքները մեկնեց խանին:
— Համբուրի՞ր ինձ, արծի՞ւ:



— Հավաքվիր... կդնաս մեղ հետ,—կամացուկ ասաց
խանը.

Այստեղ աղջիկը տեսավ Ալհալային և արցունք-
ները՝ իր արձիքի աչքերում, և—խելոք եր նա—ամեն
ինչ հասկացալ.

— Գալիս եմ,—ասաց նա:—Գալիս եմ:—Վոչ սրան,
վոչ նրան—այդպես վորոշեցիք. Հենց այդպես ել
պետք ե վորոշեն սրուով հզորները: Գալիս եմ:

Յեկ նրանք լուռ, յերեքով, գնացին գեղի ծովը
նեղ արահետներով եյին գնում, աղմկում եր քամին,
թունդ աղմկում...

Քնքուշ եր նա, աղջիկը, շուտով հոգնեց, բայց և
հսկարտ եր—չեր ուղում նրանց այդ ասել:

Յեկ յերը խանի վորդին նկատեց, վոր նա յետ ե
մում իրենցից, հարցըրեց նա նրան.

— Վախենհմւ ես:

Աղջիկը փայլատակեց նրա վրա իր աչքերը և
ցույց տվեց արյունոտած վոտքը...

— Յեկ քեզ տանեմ,—ասաց Ալհալան, ձեռքերը
մեկնելով գեղի նա: Բայց աղջիկը գրիեց իր ծեր
արձիքի պարանոցը: Բարձրացրեց խանը նրան իր
ձեռքերի վրա, ինչպես փետուր, և տարավ. իսկ աղ-
ջիկը, նստած նրա ձեռքերի վրա, հեռացնում եր
ճյուղերը նրա գեմքեց, վախենալով, վոր նրանք
կմտնեն նրա աչքերը: Յերկար նրանք գնացին, և
ահա հեռում լսում ե ծովի աղմկուկը. Այստեղ Տո-
լյակը, —նա գնում եր նրանց յետերից, արահետով, —
ասաց հորը.

— Թնդ ինձ առաջ, յեթե վոչ յես ուզում եմ գա-
շույնով խփել քո պարանոցին:

— Անցիր, ալլահը կհատուցե քո ցանկության հա-
մար, կամ կներե—նրա կամքն ե, —իսկ յես, քո հայ-
քը, ներում եմ քեզ: Յես գիտեմ՝ ինչ ե նշանակում
միբել:

Եեվ ահա նա, ծովը, նրանց առջե, այնտեղ, ներ-
քեր, խիտ, սկ և անափ: Խուլ յերգում են նրա ալիք-
ները ժայռի հենց ներքելից, և մութ ե այնտեղ ներ-
քում, և ցուրտ ե, և սարսափելի:

— Գնաս բարձվ, —ասաց խանը, համբուրելով աղ-
ջըկան:

— Գնաս բարձվ, —ասաց Ալհալան և խոնարհվեց
նրան:

Աղջիկը նայեց այնտեղ, ուր յերգում եյին ալիք-
ները, և յետ շրջվեց, սեղմելով ձեռքերը կրծքին:

— Ներքեցք ինձ, —ասաց նա նրանց...

Պարզեց նրան ձեռքերն Ալհալան և տնքաց, իսկ
խանը վերցըրեց նրան իր ձեռքերի վրա, ամուր սեղ-
մեց կրծքին, համբուրեց, և, բարձրացնելով իր զլսից
բարձր՝ վա՛ր նետեց ժայռից:

Այստեղ զարնվում և յերգում եյին ալիքները և
այնքան աղմկալի յեր, վոր նրանք յերկուսն ել
զսեցին՝ յերը նա հասավ ջրին: Վոչ ճիչ լսեցին, վո-
չինչ: Խանը խանարձվեց քարերի վրա և լուս սկսեց
նայել ներքեն, խավարին ու հռուն, ուր ծովը խառն-
վել եր ամպերին, վորտեղից աղմկոտ լողում ելին,
ալիքների խուլ շառաչները, և քամին եր թռչում
տատաննելով խանի ալեհեր մոբուքը: Տոլյայի կանգ-

Նել եր նրա գլխավերկը, գեմքը ձեռքերով ծածկած,—
անշարժ և լուս քար ժամանակն անցնում եր, յեր-
կընքով մեկը մյուսի յետելից լողում եյին ամպերը,
վրոնց քշում եր քամին. Մութ և ծանր եյին նրանք,
ինչպես մտքերը ծեր խանի, վոր պառկած եր ծովի
վերեր, բարձր ժայռի վրա:

— Գնա՞նք, հա՛յր, —ասաց Տոլայկը:

— Սպասիր...—շշնջաց խանը, կարծես լսելով ինչ-
վոր բան, Յեվ կրկին շատ ժամանակ անցավ, ալիք-
ները շաշում եյին ներքում, իսկ քամին թոշում՝ եր
դեպի ժայռը, աղմկերով ծառերում:

— Գնա՞նք, հա՛յր...

— Սպասիր ելի...

Մի անգամ չե, վոր ասում եր Տոլայկ Ալհալան
— Գնա՞նք, հա՛յր!

Խանը շարունակում եր մնալ տեղում, ուր կորցրեց
եր վերջին որերի ուրախությունը.

Բայց, —ամեն ինչ վերջ ունի, —կանգնեց նա, հզոր
և հպարտ, կանգնեց, կիտեց հոնքերը և խուլ ասաց.
— Գնա՞նք...

Գնացին նրանք, բայց շուտով խանը կանգ առավ:
— Իսկ ինչո՞ւ յեմ յես գնում և մուր, —հարցրեց նա

վորդուն, —ինչո՞ւ համար յես ապրեմ հիմա, յերբ իմ
ամրող կյանքը նրա մեջ եր Ծեր եմ յես, ինձ չեն
սիրի այլս, իսկ յեթի քեզ վոչ-վոք չի սիրում—անի-
մաստ ե ապրել աշխարհում:

— Փառք և հարստություն ունես դու, խա՞ն:

— Տուր ինձ նրա մի համբույրը—և քեզ վերցրու
այդ բոլորը, իրեն պարզեց Այդ բոլորը մեռյալ ե,

միայն կնոջ սերն ե կենդանի: Զիա այդպիսի սեր—
կյանք չունի մարզը, մուրացիկ ե նա, և վողորմելի
յեն նրա որերը: Գնաս բարձր, վորդի իմ, —ալլահի
որհությունը թող լինի քո գլխին՝ քո կյանքի բոլոր
որերին ու գիշերներին՝ Յեվ շուր յեկավ խանը
յերեսով զեպի ծովը:

— Հա՛յր, —ասաց Տոլայկը, —հա՛յր...—Յեվ չկարո-
ղացալ ասել ել վոչինչ քանի վոր վոչինչ չի կա-
րելի ասել մարդուն, ում ժամում ե մահը, վոչինչ
չես ասի նրան այնպիսի, վոր վերագարձնի նրա
հոգուն սերը դեպի կյանքը:

— Թող ինձ...

— Ալլահ...

— Նա գիտե...


Արագ քայլերով մոտեցալ խանը զառիվայրին և
նետիեց դած: Զկանքնեցրեց նրան վորդին, չըհա-
սալ: Յեվ կրկին վոչինչ չեր լսվում—վնչ ճիչ, վոչ
խանի ընկնելու աղմուկը: Միայն ալիքներն եյին
անվերջ շառաչում այնտեղ, և քամին եր վոռնում
վայրի յերգեր:

Յերկար նայում եր ներքև Տոլայկ Ալհալան և
ապա բարձրաձայն ասաց:

— Ինձ ել այդպիսի սիրտ տուր ամուր, ո, ալլահ՝
Յեվ ապա նա գնաց զեպի գիշերվա խավարը...

. . . Այսպես մեռավ խան Սոսալայմա ել-Ասվարը
և յեղավ Ղըմում խան Տոլայկ Ալհալան...

Բայազի Կուրսովից
Եւթ ու Կորցին
ՄԱՍԻՆ



Հ

այտնի՞ յե Ձեզ արդյոք, վոր վողջ
Բրետանում,—

Ուզում ես՝ հարցու լույսին,—
Զկա ավելի գեղեցիկ մի կին, քան
Կոմսուհի Ելլեն դե Կուրսին

Այն ամենը, վոր լինում ե կյանքում—
Մենք պետք ե տեսնենք ու լսենք,—
Դրա համար ել, աստղծո կամքով,
Աչքեր և ականջներ ունենք:

Դպակլից սահում ե կարապի նման
Յել գեղի կամուրջն ե նա գնում.
Մի մուրացիկ ե հանդիպում նրան,
Իսկ վերից—արևն ե նայում:

Բայց յերբ պատահում ե, վոր մեր աչքը
Զափից ավելի յե սուր—
Նշանակում ե, վոր Արարիչը
Ուզում ե տանջել մեզ իզուր:

Զբարձրացնելով աչքերը սիրող—
Գնում ե նրա յետեկց
Զահել մանկավիկը, ինչպես և սիրուն
Ծնիկը չքնաղ մաղամիւ

Մենք գլուխեր—շունը հաճախ
Դանում ե ազնիվ բարեկամ.
Հաճելի յե սիրել շնիկին.
Չի խանդում վոչվոք նրան...

Զեղ կասեմ, վոր այդ մուրացիկը
Զահել եր, թիկնեղ, գեղեցիկ,
Յեկ կույր եր.—բայց միթե կույրը
Տիկնոջ ուշագրության արժանի չի...

Նախանձում ե տեսնողին միշտ կույրը.
Բայց յեթե նա իմանմը,
Թէ սրտում մեր ինչքան մթություն ենք
Մենք պահում—ե՛ սե, ե՛ խավար!

Թպրտաց սիրու կոմունու. սրտում այդ
Մերը բնակվում եր միշտ—
Կոմունին նայեց մուրացիին անթարթ.
— «Արժանի յե սիրո, ո, ճշշտու»

Ամեն վոք սրտի խոր խոհեր ունի.
Ոչը, առյօւծը և դնեք,—
Բայց ով այդ խոհերը զիտե.
Յեկ զիտեն դու քոնն արդյոք...

Կոմունին ասում ե մուրացիին. «—Լսիր,
Կոմունի ելլենն ե դիմում քեղ.
Յակ ե պատճառում ինձ քո մութ հոգին.
Ի՞նչպես ամոքեմ նրա վիշտը յետու

Երբ զգում ես դու քո սրտում
Մեղրի կամ թույնի կուտակումն առատ—
Տնուր մերձակորիդ ավելցուկն իսկույն.
Ի՞նչի՞դ ե նրա տենդը հորդառատ:

— «Մաղամ»—ասում ե մուրացիկը հեզ.
Իմ թանկագին մաղամ,—
Իմ ամբողջ կյանքի որերը սև
Զեր մի համբույրին յես կտամ».

Լույս-ճշմարտության կարոտով վասված
Այնքա՞ն ես ազահ այն ուղում,
Վոր սիրում ես քո սուտը հնարած,
Ի՞նչպես ճշմարտությունն մի սուրբի

— «Սիրելիս, դու քիչ այն կոնդը նայիր,
Ասաց կոմունին ծառային,—
Բարի աստուծո փառքի համար յես
Ճեղությունս չեմ խնայի»

Կինն ել աշխարհում—ամեն ինչի պես—
Խաղալիք ե աստուծո ձեռին.
Լավ ե—մտածենք մանկիների հեզ,
Թիթեռնիկների, ծիտերի մասին».

Դրկում ե կույըը հպարտ կոմսուհուն,
Հպում ե շրթերը շրթերին,—
Մշուշփում ե կոմսուհու հայացքը,
Խոնարհվում ե իրանը նրբին,

Ո, այրեր,—կեցցէ յերջանկությունը,
Թող թեկուզ լոկ մի պահ տեին—
Յերջանկության մեջ իմաստություն կա
Բոլոր գրքերից ավելին,

Այստեղ կոմսուհու հպարտությունը
Հաղթեց կըքերին նրա վես,
Յեկ հրամայեց մանկավիկին նա՛.
— Եմին, ո, մանկիկըս, չընայես»

Սեր վոստիները—պահն ու սատանան—
Աշխարհում հաղթում են միշտ մեզ.
Անպարտելի յե ժամը փորձության.—
Ուրեմն դու քեզ չտանջես»

Հետո, հագեցած վոտքի կանգնելով,
— Սպանիր,—ասաց ծառային.
Յեկ ուրախությամբ այդ տղան սիրող
Վոստին իր հանձնեց սև մահին:

Ով խմում ե սերն ու խանդը կիղող
Միկնույն այրող բաժակից,—
Անխոսափելի խմելու յե նա
Վրեժի հեղուկը կարմիր:



Խոնակ շրթերը սբռելով նազով,
Կոմսուհին ասաց Հիսուսին.
— Քեզ ընծայեցի, դրախտի արքա,
Իմ մաքրությունը լույսի...»

Թե ուր ե վչում, վճռ կողմը, քամին—
Մեզ դաշտի ցողունն ե ասում,—
Բայց աստված ինքն ել չգիտե յերեք,
Թե կինը ինչ ե ուզում:

Յեկ մանկավիկին նա հեզ հարցըրեց.
— Ճիշտ չե, վոր բարի յեմ յես շատ...
Ել ինչնու յես լալիս, ...սիրելիս.
Գնանք տուն, ժամանակին ե արդ...»

Ծնվում ե սերը, ինչպես բոց, արագ,—
Յեկ մենք այրվելով նրանում,
Դառնում ենք ինքներըս կըակ՝
Գեղեցիկ, և վառ, և անհուն.—

Զպատասխանեց ծառան կոմսուհուն,
Արցունքը միայն նա սրբեց,
Բայց հառաջանքը իր անհուն
Ետյենը, ավմազ, չըզսպեց:

Բաշխում ենք մենք կյանքը շռայլ.—
Չե վոր ամենքըս կյանքում
Բերում ենք ծիծաղ մի քիչ վառ—
Յեկ մի սիրտ լիքը արցունք:

Կոմսուէին իր սև հռնքերը կիտեց
Յեվ, ճիշը զսպելով հաղիվ—
իր մանկավիկին կամուըջից նետեց
Դեպի ջրերը փոսիւ

Եեթե մենք խստագույնս դատենք
Բոլորին, ով արժանի յե դատի —
Յերջանիկ չենք լինի մենք,
Բայց աշխարհը դատարկի պիտի,

Յեվ կրկին իր կապույտ աչերը
Ելենք գեպ յերկինք հառեց.
— Յեղիր զատավնը ինձ, տեր իմ,
Բայց արդար յեղիր, ինչպես յեսու

Մենք գիտենք.— գեղեցիկ կանանց
Մեղերը — հանաքներ են քնքուշ.
Իսկ — այնքան բարի յե սստված,
Այնքան հեղ ենա և զգուշ...

Գիշերը կոմսուհին, արբային կանչելով,
Պատմեց իր մեղերը բոլոր,
Յեվ — քավեց իր այդ մեղերը բոլոր
Լոկ հիսուն լուի հանձնելով.

Ինչ վոր պատահում ե կյանքում —
Մենք պետք ե տեսնենք ու լսենք,
Դրա համար ել, աստուծո կամքով,
Աչեր և ականջներ ունենք,

Եյս ամենը — հար գաղանիք կը մնար,
Եյս մասին ով կասեր մեղ,—
Բայց — աջամբույրի գումարում հանկարծ
Ինսը կեղծ զրամ պատահեց...


Բայց յերբ պատահում ե, վոր մեր աչքը
Զափից ալելի յե սուր —
Նշանակում ե, վոր Արարիչը
Մեզ չարչարել ե ուզում.

Յեվ ահա, բաշխելով այդ կեղծ գրամները
Իր հոտի ծուխերին աղքատ —
Արբահայրը պատմեց այս քնքուշ բաները
Յեվ տվեց մեզ — չքնաղ մեւ բալադ.

Տանջալից են սրտի ցալերը
Յեվ հաճախ — չիք բուժում նրանց,—
Այնժամ զվարթուն հանաքնի ենք
Մենք բուժում ցալերն այդ անանց:




Իւ ԹԱՐՎԱԳԻ
ԲԱՐԵՎԱՄ
ՅՈՒՒՆԻ
ԴԱՊԵԼԼԵՐԻ



 Աչպես կայծերը ամպի սկզբում —
Միայնակ ենք մենք ովկանում կյանքի
Բայց մենք — գալիքի հունտերն ենք կյանքում,
Մենք — կրակներն ենք պայծառ գալիքին —

Կապրի. 24. IV. 1911




ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եզ

| | |
|---------------------------------------|-----|
| Առաջնային մուլտֆիլմեր | 21 |
| Բազելի յերգը | 29 |
| Վալախական լեդենդ | 45 |
| Աղջիկը և մահը | 53 |
| Ստախոս Սաբյակի և ճշմարտության սիրահար | |
| Փայտփորիկի մասին | 69 |
| Խանը և նրա վրդին | 85 |
| Բալլագ Կոմսուհի Ելեն դե Կուբսիկ մասին | 101 |
| Իմ քանկաղին բարեկամ Լուիջի օտարերին | 113 |

Spine
1959
S. H. G.





Ազգային գրադարան



NL0315863

Գրադարան 1934

10.657

891.71
9-83